**Մրցույթ՝ Երևանի «Ներսես Մեծի անվան թիվ 124 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության (5 դասաժամ), մաթեմատիկայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում /Ձև 1/ , մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4)«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկան աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն /ձև 5/,
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի փետրվարի 6-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի Ներսես Մեծի անվան թիվ 124 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 010 62-50-90 :